ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դիզելային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք. Գավառ 12 նոյեմբերի 2026թ.

Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի կարգավորումների սույն թվականի նոյեմբերի 12-ին ժամը 15:00-ին՝ նիստի կասեցման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դիզելային վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացած մասնակցի՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է հրավերի պահանջների անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխանող իրական շահառուների մասին հայտարարագիրը՝ հավելված 1.3:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1, ըստ որի գնային առաջարկ է ներկայացվել 1-ին չափաբաժնի համար,
- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրությունը.
- լիազորագիր,
- իրական շահառուների մասին հայտարարագիր՝ հավելված 1.3:

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Դիզելային վառելիք, կտրոններով
949.000 /ինը հարյուր քառասունինը հազար դրամ/

Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակցի կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները չեն նվազեցվել են և աճուրդն ամփոփելու պահին մասնակցի ներկայացրած գնային առաջարկները, առանց ԱԱՀ-ի, կազմել են՝

ՀՀ դրամ

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	«ՖԼԵԾ» ՍՊԸ	Գինը ԱԱՀ-ով
1	Դիզելային վառելիք, կտրոններով	790.083,33	949.000

2) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում՝ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հիմքով:
- Ընտրված մասնակից «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով առաջարկել հրավերով սահմանված ժամկետներում հաստատել կնքվելիք պայմանագրի նախագիծը, ինչպես նաև ներկայացնել որակավորման ու պայամանագրի ապահովումները:
- Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:

Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել մասնակցի կողմից որակավորման ու պայամանագրի ապահովումները ներկայացնելու օրվա հաջորդող հետո չորրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան